ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 մարտի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

25
(3234)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԱՄԻՕ ԲԱՆԿԻՑ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ 288 ՄԼՆ ԴՐԱՄ

Հայաստանյան բանկային համակարգին առնչվող հերթական իրավական վեճը հասել է դատարան: Խոսքը վերաբերում է 2016 թվականի օգոստոսի 12-ին կնքված «Երրորդ անձի իրավունքի գրավի պայմանագիր թիվ AG1600653» պայմանագրին, որը կնքվել է Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի (ներկայումս՝ ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ) եւ քաղաքացիներ Գաբրիել Չենբերջյանի ու Կարինե Ավդալյանի միջեւ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նշված պայմանագիրը ներկայումս վիճարկվում է դատարանում, իսկ հայցվորները պահանջում են այն ճանաչել անվավեր՝ պնդելով, որ դրա հիմքով հետագայում իրականացված ֆինանսական գործողությունները վնասել են իրենց իրավունքները:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է, որ դատական գործի առանցքում գտնվում է 2021 թվականի հոկտեմբերի 5-ին իրականացված ֆինանսական գործողությունը: Ըստ ներկայացված տվյալների՝ այդ օրը բանկը փոխարկել եւ փոխանցել է 288,300,000 ՀՀ դրամ՝ այն ուղղելով Կարինե Ավդալյանի սնանկության հատուկ հաշվին:

Հայցվորների պնդմամբ՝ այդ գործարքը կատարվել է վիճարկվող պայմանագրի հիման վրա: Եթե դատարանը պայմանագիրը ճանաչի անվավեր, ապա պետք է վերանայվեն նաեւ դրա հիմքով իրականացված ֆինանսական գործողությունները:

Դատարանին ներկայացված պահանջներով հայցվորները խնդրում են՝

- անվավեր ճանաչել 12.08.2016թ. կնքված պայմանագիրը,
- անվավեր ճանաչել նաեւ 05.10.2021թ. իրականացված գումարի փոխանցման գործողությունները,
- եւ պարտավորեցնել բանկին վերադարձնել 288,300,000 դրամը:

Հայցը ներկայացվել է՝ հողում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներին:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նախաձեռնված քրեական վարույթով պարզվել է, որ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պաշտոնատար անձինք, օգտագործելով իրենց ծառայողական լիազորությունները, խմբի կազմում, նախնական համաձայնությամբ ստացել են առանձնապես խոշոր չափերի կաշառք: Մասնավորապես, համալսարանի պրոռեկտորի պաշտոնը զբաղեցրած անձը, ռեկտորի իմացությամբ, տրանսպորտային բաժնի պետին եւ համալսարանի ենթակայությամբ գործող «Աղավնաձոր» ուսումնական բազայի տնօրենին առաջարկել է «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի եւ բազայի կանոնադրությամբ սահմանված կարգի խախտմամբ հյուրերի ընդունման, նրանց հանգստի կազմակերպման, վերջիններից ստացված եւ հիմնադրամի հաշվեկշռում մուտքագրված գումարները տնօրինելու դիմաց իրեն եւ ռեկտորին կաշառք տալ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Հայաստանում խոսքի ազատության վիճակի եւ լրագրողների իրավունքների խախտումների վերաբերյալ 2025 թվականի տարեկան զեկույցն է հրապարակել Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց տարեկան զեկույցը, որը ցույց է տալիս մտահոգիչ միտում. լրատվամիջոցների ներկայացուցիչների նկատմամբ ճնշումների եւ խախտումների ընդհանուր թիվը աճել է: Զեկույցի համաձայն՝ 2025 թվականին արձանագրվել է 224 խախտում, մինչդեռ 2024 թվականին այդ թիվը կազմել էր 208: Փաստաթղթում նշվում է նաեւ, որ տարվա ընթացքում ՋԼՄ-ների եւ լրագրողների նկատմամբ իրականացված ճնշումների մեծ մասը, ինչպես նաեւ դատական հայցերի շուրջ կեսը, ներկայացվել են իշխանության ներկայացուցիչների կողմից, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց: Տարվա ընթացքում արձանագրվել է նաեւ լրագրողների նկատմամբ անվայելուչ պահվածքի, սպառնալիքների, վիրավորանքների եւ օրինական մասնագիտական գործունեության խոչընդոտման 45 դեպք: Դրանցից 33-ը տեղի են ունեցել պետական մարմինների կամ պաշտոնյաների մասնակցությամբ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

2026 թվականի 10-րդ շաբաթվա ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է սուր շնչառական վարակներով պայմանավորված հիվանդացության միջին ակտիվություն, հայտնում է Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնը: ՍՇՎ-ով պայմանավորված հիվանդացությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ցածր է 1.4 անգամ: Ընդհանուր դեպքերի գրեթե 82.6%-ը կազմում են 0-18 տարեկանները, առավել բարձր ցուցանիշը շարունակվում է արձանագրվել 0-4 տարեկանների շրջանում: Հայաստանի Հանրապետությունում շարունակվում են շրջանառվել ռեսպիրատոր սինցիտիալ վիրուսի, ռինովիրուսի եւ ադենովիրուսի հարուցիչներ:

ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏՈՒՄ Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ

ArmLur.am-ի տաղավարում հյուրընկալել ենք փաստաբան Հակոբ Ջհանգիրյանին:
Հաշվեքննիչ պալատում որոշակի իրադարձություններ տեղի ունեցան, նաեւ պաշտոնից ազատված դատական հայցերին անդրադարձ էր ունեցել «Ժողովուրդ» օրաթերթը՝ հարցադրելով, թե ինչ համատարած են աշխատողները դիմում դատարան՝ փորձելով վերականգնել իրենց իրավունքները:

-Պարո՛ն Ջհանգիրյան, կասե՞ք՝ ինչ է կատարվում հաշվեքննիչ պալատում, ինչ դրոցեսի եք ականատես լինում Դուք որպես փաստաբան:

-Նախ նշեմ, որ 2024 թվականի դեկտեմբերի 10-ից հաշվեքննիչ պալատում, ըստ համապատասխան փոփոխությունների, բազմաթիվ աշխատակիցներ ազատվեցին աշխատանքից, նրանց թիվը մոտ 20 ից ավելի է, կարծես թե այդ փոփոխությունների արդյունքում նաեւ հաշվեքննիչ պալատի աշխատակիցները չկարողացան ավարտել տարեկան հաշվեքննությունը, ինչպես նաեւ 9-ամսյա հաշվետվությունը: Այս մասով ես ցանկանում եմ հրավիրել հանրության ուշադրությունը, որ պետական բյուջեի կատարողականի մասով կարծես թե 2024 թվականին հաշվեքննությունը պատշաճ չի իրականացվել, եւ ըստ էության, 20-ից ավելի աշխատակիցներ, որոնք ամբողջ տարին իրականացրել են հաշվեքննություն, այդ մասով իրենց աշխատանքները չեն ավարտել, եւ համապատասխան եզրակացություններ չեն ներկայացվի, թե հաշվեքննիչ պալատը ինչպես է այդ հաշվեքննությունների արդյունքները ներկայացրել պառլամենտ՝ մնում է անհայտ: 20-ից ավելի աշխատակիցներ աշխատանքից ազատվել էին, որոնց մի մասը բողոքարկել էր իրենց ազատման հրամանները դատական կարգով, որոնց մի մասի շահերը ներկայացնում եմ դատարաններում եւ արդեն ունենք բավարարված դրական ակտեր, որտեղ հաշվեքննիչ պալատի նախագահի եւ գլխավոր քարտուղար Վազգեն Հարությունյանի արձակած հրամանները ճանաչվել են անվավեր: Մեկ գործով կցանկանայի հանրության ուշադրությունը հրավիրել, մասնավորապես 6-րդ վարչության պետի տեղակալի՝ Մուշեղ Սաֆարյանի գործով, որտեղ առաջին ատյանի դատարանը անվավեր էր ճանաչել եւ վերացրել էր հաշվեքննիչ պալատի գլխավոր քարտուղարի հրամանը, վերաքննիչ քաղաքացիական դատարանում այդ գործով կայացրեց տարբեր տարբերակված մոտեցում եւ, ըստ էության, վերաքննիչ դատարանի դատական ակտը տարբերվում է նաեւ առաջին ատյանի մեր դատարանների կայացրած դատական ակտերից, որոնք նույնական են նույն փաստական հանգամանքներով, հրամանների բեկանման հիմքով բեկանվում են, իսկ Հարություն Ենոքյանը մերժել էր Մուշեղ Սաֆարյանի հայցը, այս մասով մենք համապատասխան իրազեկումներ ենք իրականացրել եւ ԲԴԽ-ին, եւ արդարադատության նախարարությանը:

-Իսկ ի՞նչ կասկածներ ունեք:

-Այս պահին զերծ կմնամ որեւէ կասկածներ հայտնելուց, բայց առանց ծուխ կրակ չի լինի, ինչպես ժողովուրդն է ասում, եւ ծանոթանալով դատական ակտին՝ դատարանը առանց անդրադառնալու այդ հրամանների իրավաչափությանը եւ իրավական ու փաստական հանգամանքներին՝ որեւիցե խոսք չկա այդ հրամանների մեջ: Եւ յուրաքանչյուր պրոֆեսիոնալ իրավաբան, ծանոթանալով այդ դատական ակտերին, կտեսնի, որ այնտեղ կա ակնհայտ ապօրինություն, այս պահին դեռ վճռաբեկ բողոք չի ներկայացվել, բայց շուտով կներկայացվի, մենք նաեւ համապատասխան գրություններով ներկայացրել ենք դատարաններին: Նաեւ ուզում եմ հետաքրքիր զուգադիպությունը նշել, որ հաշվեքննիչ պալատի գործերով, որոնք գտնվում են վերաքննիչ դատարանում, մեծամասնությամբ հաշվեքննիչ դատարանի կազմում ընդգրկված է հենց ինքը՝ Հարություն Ենոքյանը: Մեզ մոտ սա արդեն իսկ կասկածներ է հարուցում այս ամենը, եւ ասեմ, որ մենք հետամուտ ենք լինելու այս հանգամանքին:

-Ըստ Ձեզ, արձագանք կունենա՞ք՝ հաշվի առնելով, թե դատական համակարգում ինչ իրավիճակ է տիրում, ո՞ւր է մակագրման հայտնի համակարգը, որ, ըստ էության, պետք է օբյեկտիվ մակագրել գործերը:

-Դատական համակարգում տիրող խնդիրների մասին բազմիցս բարձրաձայնվել է, բայց մենք այս պահին լիահույս ենք, որ արդարադատությունը, ի վերջո, կշահի, եւ կունենանք այն կետը, որը ակնկալում ենք, որովհետեւ, ըստ էության, ունենք հստակ խնդիր, որոնք որ իրավական առումով դատարանները դրանց վերաբերյալ տալիս են իրենց հստակ լուծումները, իսկ վերաքննիչ դատարանում սա առաջին դեպքն է, եւ հուսանք, արդարադատությունը կհաղթի, եւ չենք շեղվի:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՄԻԼԻՈՆՆԵՐ ՈՒ ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ

ՇԻՐԱԿԻ ՓՈԽՄԱՐՔՊԵՏԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

Շիրակի մարզպետի տեղակալ Արտուշ Հովհաննիսյանը պաշտոնում նշանակվել է 2025 թվականի հունվարի 23-ին: Armlur.am-ի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մինչ այդ նա երկար տարիներ աշխատել է պետական կառավարման համակարգում՝ հիմնականում Շիրակի մարզում:

Արտուշ Հովհաննիսյանը մասնագիտական գործունեությունը սկսել է Շիրակի մարզպետարանում:

2016-2019 թվականներին նա աշխատել է ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային եւ ենթակառուցվածքների գործունեության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

2019-2020 թվականներին Հովհաննիսյանը աշխատել է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնում՝ որպես փորձագետ:

2020-2024 թվականներին նա զբաղեցրել է նույն կառույցի Շիրակի մարզային կենտրոնի պետի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնը:

Armlur.am-ը տեղեկացավ, որ Հովհաննիսյանի կինը՝ Հայաստան Հովհաննիսյանը, աշխատում է «Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ որպես տնօրեն. հարցական է՝ արդյոք ամուսնու գործոնն այստեղ կա, թե ոչ:

Պաշտոնը ստանձնելուց մոտ երկու շաբաթ առաջ՝ 2025 թվականի հունվարի 8-ին, Արտուշ Հովհաննիսյանը համատեղ սեփականությամբ բնակարան է ձեռք բերել Գյումրիում:

Հայտարարագրի տվյալները

Անշարժ գույք

Հայտարարագրի համաձայն՝ Ա. Հովհաննիսյանը ունի 3 միավոր անշարժ գույք.

• Բնակարան Գյումրիում - համատեղ սեփականություն, ձեռք է բերվել 2025թ. հունվարի 8-ին (գնում)
• Բնակարան Երեւանում - միանձնյա սեփականություն, ձեռք է բերվել 2007թ. մայիսի 29-ին (գնում)
• Ավտոտնակ Երեւանում - միանձնյա սեփականություն, ձեռք է բերվել 2007թ. հունիսի 15-ին (գնում)

Բանկային միջոցներ

• Բանկային հաշիվների մնացորդներ՝ չկան

Կանխիկ դրամ

Հայտարարագրի համաձայն՝ Հովհաննիսյանն ունի՝

• 8,000 ԱՄՆ դոլար
• 3,800,000 ռուսական ռուբլի
• 4,000,000 դրամ

Երրորդ անձի պատկանող կանխիկ միջոցներ

• 1,500,000 դրամ

Եկամուտներ

Հաշվետու ժամանակահատվածում հայտարարագրվել է.

• Աշխատավարձ՝ 244,748 դրամ
• Վճարող կառույց՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ

Վարկային պարտավորություններ

• Վարկի մայր գումարի մնացորդ՝ 916,000 դրամ

Armlur.am-ը նկատեց, որ հայտարարագրի տվյալները մի շարք հարցեր են առաջացնում.

• Պաշտոնը ստանձնելուց ընդամենը երկու շաբաթ առաջ Գյումրիում բնակարանի ձեռքբերումը ինչ միջոցների հաշվին է իրականացվել՝ հաշվի առնելով հայտարարագրված համեմատաբար փոքր եկամուտը:
• Հայտարարագրում նշված կանխիկ դրամական միջոցները (դրամ, դոլար եւ ռուբլի) ինչ աղբյուրներից են ձեւավորվել:
• Ինչու են զգալի գումարներ պահվում կանխիկ տեսքով, այն դեպքում, երբ բանկային հաշիվների մնացորդներ չեն նշվում:
• Հայտարարագրում առկա է նաեւ երրորդ անձի պատկանող 1,5 մլն դրամ կանխիկ գումար, որի ծագման եւ օգտագործման մասին բացատրություն չի ներկայացվում:
• Աշխատավարձի չափը՝ 244,748 դրամ է, համադրելի է արդյոք հայտարարված գույքի եւ կանխիկ միջոցների հետ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՑՈՐԵՆԻ ՆՈՐ ԽՄԲԱՔԱՆԱԿ

Ադրբեջանի տարածքով Հայաստան է ուղարկվել ռուսական ցորենի հերթական խմբաքանակը: Այս մասին հայտնել է ադրբեջանական Azertag գործակալությունը: Նշվում է, որ այս պահի դրությամբ Ադրբեջանի տարածքով երկաթուղային ճանապարհով Հայաստան է տեղափոխվել ավելի քան 21 հազար տոննա ցորեն: Այդ ծավալի բեռ տեղափոխելու համար ընդհանուր առմամբ օգտագործվել է 302 վագոն: Հաղորդվում է նաեւ, որ նույն երթուղով Հայաստան է տեղափոխվել 610 տոննա պարարտանյութ:

Վերջին անգամ 8 վագոնից բաղկացած բեռնատար գնացքն Ադրբեջանի տարածքով Հայաստան էր տեղափոխել 560 տոննա ռուսական ցորեն:

Ինչպես նախորդ դեպքերում, այս անգամ էլ ռուսական ցորենը Հայաստան կհասնի՝ անցնելով ոչ միայն Ադրբեջանի, այլ նաեւ Վրաստանի տարածքով, քանի որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ երկաթուղային ուղիղ հաղորդակցություն չկա:

Ադրբեջանի տարածքով ռուսական ցորենի առաջին խմբաքանակը Հայաստան էր հասել 2025 թվականի նոյեմբերի 6-ին: Այդ ժամանակ երկաթուղային ճանապարհով Հայաստան էր տեղափոխվել 1000 տոննա ցորեն: Նոյեմբերի 8-ին կրկին Ադրբեջանի տարածքով Հայաստան էր հասել դազախական ցորենի խմբաքանակը՝ 1000 տոննա: Դրանից հետո ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը հայտարարել էր, որ Ադրբեջանի տարածքով դեպի Հայաստան ցորենի մատակարարումները շարունակվելու են: Ռուսական կողմը եւս հայտարարել էր Ադրբեջանի տարածքով Հայաստանին ցորենի մատակարարումները շարունակելու մասին:

ԵԼՈՒՅԹ ԿՈՒՆԵՆԱ ԵՄ–ՈՒՄ

Չորեքշաբթի օրը՝ ժամը 12:00-ին, Նիկոլ Փաշինյանը ելույթ կունենա Ստրասբուրգի լիագումար նիստերի դահլիճում, հայտնում է Եվրոպական խորհրդարանը:

Փաշինյանի ուղերձը տեղի է ունենում Հայաստանում 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններից առաջ, որը, ակնկալվում է, կուրվագծի երկրի արագ զարգացող հարաբերությունների հետագա ընթացքը ԵՄ-ի հետ եւ խաղաղության գործընթացը հարեւան Ադրբեջանի հետ:

«Հայաստանի կառավարությունը հավատարիմ է Բաքվի հետ տեւական խաղաղության հասնելու եւ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը, Արեւմուտքի հետ մերձեցմանը եւ ապագայում ԵՄ անդամակցության հնարավոր հայտին»,- գրված է հաղորդագրության մեջ:

Բացի այդ, Եվրոպական միությունը ներկայումս վիզաների ազատականացման շուրջ երկխոսություն է վարում Հայաստանի հետ, իսկ մայիսի 5-ին նախատեսված է ԵՄ-Հայաստան հատուկ գագաթնաժողովը:

Սա կլինի Նիկոլ Փաշինյանի երկրորդ ելույթը Եվրոպական խորհրդարանում՝ 2023 թվականին կատարած նախորդ այցից հետո:

ՄԱԿՐՈՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը վերահաստատել է աջակցությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացին:

Այս մասին Ֆրանսիայի նախագահը գրել է X-ի իր միկրոբլոգում՝ մանրամասներ հայտնելով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ ունեցած հեռախոսազրույցի վերաբերյալ:

«Տարածաշրջանի ղեկավարների հետ իմ խորհրդակցությունների շրջանակներում զրույց ունեցա Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ, որին հայտնեցի մեր աջակցությունն ու համերաշխությունը իր երկրին Իրանի հարվածներից հետո:

Ես նաեւ շնորհակալ եմ Ադրբեջանին՝ մեր քաղաքացիների տարհանման հարցում ցուցաբերած օգնության համար:

Ես օգտվեցի այս հնարավորությունից՝ վերահաստատելու մեր աջակցությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացին եւ մեր ցանկությունը՝ շարունակել երկկողմ երկխոսությունը Բաքվի հետ ավելի ամուր հիմքերի վրա»,- գրել է Մակրոնը:

ՊԱՅԹՅՈՒՆ ԲԵԼԳԻԱՅՈՒՄ

Բելգիայի Լիեժ քաղաքում պայթյուն է տեղի ունեցել սինագոգի մերձակայքում: Ոչ ոք չի տուժել, սակայն շենքը նյութական վնաս է կրել: Այս մասին հաղորդել է Belga լրատվական գործակալությունը՝ հղում անելով տեղական ոստիկանությանը:

Ըստ հրապարակման՝ պայթյունը տեղի է ունեցել տեղական ժամանակով առավոտյան մոտավորապես չորսին սինագոգի առջեւ. կոտրվել են շենքի ապակիները, պատճառվել է նյութական վնաս, տուժածներ չկան:

Գործակալության տեղեկատվության համաձայն՝ սինագոգի դիմացի փողոցը փակ է, ընթանում է հետաքննություն:

ԽՈՑԵԼ ԵՆ ԲԱԼԻՍՏԻԿ ՀՐԹԻՌ

ՆԱՏՕ-ի հակաօդային պաշտպանության համակարգերը Արեւելյան Միջերկրականում խոցել են Իրանից արձակված եւս մեկ բալիստիկ հրթիռ, որը մտել էր Թուրքիայի օդային տարածք: Այս մասին երկուշաբթի հայտնել է Թուրքիայի պաշտպանության նախարարությունը:

Նախարարությունը հայտարարել է, որ վերջին մեկ շաբաթվա ընթացքում սա արդեն երկրորդ իրանական բալիստիկ հրթիռն է, որը ուղղվել է ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիային:

Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ հրթիռի խոցումից հետո զինամթերքի որոշ մասեր ընկել են Թուրքիայի հարավարեւելյան Գազիանթեփ նահանգում: Դեպքի հետեւանքով տուժածներ չկան:

Թուրքիայի պաշտպանության նախարարությունը նաեւ կոչ է արել բոլոր կողմերին հաշվի առնել Անկարայի նախազգուշացումները եւ զերծ մնալ տարածաշրջանում իրավիճակի սրումից:

Լուրը փոխանցել է Reuters գործակալությունը:

ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Ի՞ՆՉ Է ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ ԼՈՒՍԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆԸ

Armlur.am-ը, ուսումնասիրելով աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանի հայտարարագիրը, բացահայտեց մի շարք խնդրահարույց կետեր: Լուսինե Քոչարյանը պաշտոնը ստանձնել է 2025 թվականի նոյեմբերի 13-ին: Նա նախարարությունում աշխատում է նախարար Արսեն Թորոսյանի թիմում, որը նախկինում զբաղեցրել է նաեւ առողջապահության նախարարի պաշտոնը:

Լուսինե Քոչարյանի կենսագրության համաձայն՝ նա աշխատել է նաեւ ՀՀ առողջապահության նախարարությունում որպես առողջապահության քաղաքականության վարչության պետի պաշտոնակատար, այնուհետեւ որպես գլխավոր քարտուղար այն ժամանակահատվածում, երբ առողջապահության նախարարի պաշտոնը զբաղեցնում էր Արսեն Թորոսյանը:

ArmLur.am-ը պարզեց, որ Քոչարյանի ամուսինը՝ Արա Համբարձումյանը, աշխատում է Կարմիր խաչի միջազգային կոմիտեում որպես ֆինանսական տնօրեն: Հայտարարագրի համաձայն՝ Քոչարյանը եկամուտ է ստացել նաեւ Հայկական Կարմիր խաչի ընկերությունից:

Անշարժ գույք

Հայտարարագրի համաձայն՝ Լուսինե Քոչարյանն ունի 1 միավոր անշարժ գույք (բաժնային սեփականություն).

• Բնակարան Երեւանում - բաժնային սեփականություն (1/5 մասնաբաժին), ձեռք է բերվել 1995 թվականի ապրիլի 30-ին

Բացի այդ, հայտարարագրում նշված է նաեւ Երեւանում գտնվող բնակարան, որը նա 90 եւ ավելի օր փաստացի տիրապետել է, սակայն այլ տվյալներ չեն ներկայացվել:

Տրանսպորտային միջոց

• Հայտարարագրում նշված է 2007 թվականի արտադրության TOYOTA մակնիշի ավտոմեքենայի առկայության մասին որպես 90 եւ ավելի օր փաստացի տիրապետվող տրանսպորտի միջոց:

Բանկային միջոցներ

• Բանկային հաշիվների մնացորդ՝ 4,093,000 դրամ

Կանխիկ դրամ

• 900,000 դրամ

Եկամուտներ

Հայտարարագրված եկամուտների ընդհանուր չափը կազմում է 14,555,688 դրամ:

Եկամուտների աղբյուրներն են՝

• Շահաբաժին - «ՕՖՆԱՐ» ՍՊԸ - 3,500,000 դրամ

• Աշխատավարձ - ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն - 312,740 դրամ

• Քաղաքացիաիրավական պայմանագիր - ՄԱԿ - 515,000 դրամ

• Աշխատավարձ - «ՕՖՆԱՐ» - 1,940,649 դրամ

• Այլ եկամուտ - Հայկական Կարմիր խաչի ընկերություն - 1,536,000 դրամ

• Քաղաքացիաիրավական պայմանագիր - «Էրեբունի» բժշկական ակադեմիա հիմնադրամ - 256,875 դրամ

• Աշխատավարձ - Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան - 1,715,783 դրամ

• Քաղաքացիաիրավական պայմանագիր - «Հայաստանի երեխաներ» բարեգործական հիմնադրամ - 1,427,262 դրամ

• Քաղաքացիաիրավական պայմանագիր - «Միշել Օդենի անվան «Մայր» կենտրոն» - 20,000 դրամ

• Աշխատավարձ - «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» - 1,789,438 դրամ

• Աշխատավարձ - Տեխնիկական համագործակցության եւ զարգացման գործակալության հայաստանյան մասնաճյուղ - 1,541,941 դրամ

Ընդամենը՝ 14,555,688 դրամ:

Ուշադրության արժանի հանգամանքներ

• Լուսինե Քոչարյանի եկամուտները ձեւավորվել են միաժամանակ 11 պետական, մասնավոր եւ միջազգային կազմակերպություններից:

• Հայտարարագրում նշված է նաեւ շահաբաժին մասնավոր ընկերությունից («ՕՖՆԱՐ» ՍՊԸ), ինչը կարող է առաջացնել հարցեր բիզնեսի հետ կապի առկայության մասին:

• Քոչարյանը եկամուտ է ստացել Հայկական Կարմիր խաչի ընկերությունից, այն դեպքում, երբ նրա ամուսինը աշխատում է Կարմիր խաչի միջազգային կոմիտեում որպես ֆինանսական տնօրեն, ինչը կարող է հնարավոր համընկնումների հարց առաջացնել:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ԻՐԱՆՈՒՄ

10 օրից ավել է, Իրանում շարունակվում են պատերազմական գործողությունները: Իսրայելը ԱՄՆ-ի հետ համատեղ հրթիռակոծության տակ է պահում Իրանի ռազմական եւ քաղաքացիական նշանակության օբյեկտներ՝ դպրոցներ, հիվանդանոցներ: Իսրայելի թիրախում են նաեւ Իրանի նավթապահեստարանները: Անցած գիշեր Իսրայելը հարվածել է Թեհրանի Շահրան նավթապահեստարանը:

Ռազմական գործողություններին զուգահեռ Իրանում նոր նշանակումներ են:

Այաթոլլահ Ալի Խամենեիի որդին՝ Մոջթաբա Խամենեին, ընտրվել է Իրանի նոր հոգեւոր առաջնորդ:

Իրանցի քաղաքական մեկնաբանները հայտնում են, որ յուրաքանչյուր գեներալին, նախարարին փոխարինող 5-ից 7 մարդ է ընտրված:

Իրանի առողջապահության նախարարությունը հայտնում է որ պատերազմի հետեւանքով զոհվել է ավելի քան 1200 խաղաղ բնակիչ, եւ վիրավորվել ավելի քան 10000 քաղաքացի:

Հիշեցնենք, որ Իսրայելը ԱՄՆ-ի հետ համատեղ վերսկսել է Իրանի դեմ ռազմական գործողությունները փետրվարի 28-ի առավոտյան: Այն ծանր նյութական եւ մարդկային կորուստներով շարունակվում է առ այսօր:

ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Մարտի 8-ին Մասկատ-Երեւան թռիչքով Հայաստան է վերադարձել ՀՀ 63 քաղաքացի:

Օմանում ՀՀ դեսպանության հյուպատոսն ԱՄԷ-ում ՀՀ դեսպանության կողմից կազմակերպված տեղափոխման հնարավորությունից օգտված քաղաքացիներին դիմավորել է ԱՄԷ-Օման սահմանակետում եւ ապահովել ուղեկցություն դեպի Մասկատի օդանավակայան, որտեղ ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցություն:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորական ուղերձ է հղել Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդ Սեյեդ Մոջթաբա Խամենեիին՝ գերագույն առաջնորդի պաշտոնում ընտրվելու առիթով: Ուղեձում նշված է. «Շնորհավորում եմ Ձեզ Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդի պաշտոնում ընտրվելու առիթով:

Վստահ եմ, որ Հայաստանի եւ Իրանի միջեւ ամուր կապերը կշարունակեն զարգանալ՝ գրանցելով նոր հաջողություններ:

Առիթը պատեհ համարելով՝ Իրանի բարեկամ ժողովրդին մաղթում եմ բարօրություն եւ հարատեւ խաղաղություն»:

ՄՈԼՈՏՈՎԻ ԿՈԿՏԵՅԼ

ԻՆՉՈ՞Վ ԵՆ ՓՈՐՁԵԼ ՀՐԿԻԶԵԼ ԱԱԾ ՇԵՆՔԸ

ԱԱԾ շենքը հրկիզելու գործով ձերբակալված անձին տանում են դատարան՝ խափանման միջոցի հարցը լուծելու: ՀՀ ֆինչական կոմիտեից մեզ պատշոնապես հայտնեցին, որ բրեական վարույթի նախաքննության ընթացքում 1 անձի նկատմամբ հարուցվել է հանրային բրեական հետապնդում ՀՀ բրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով՝ ահաբեկչություն:

1. Պայթյուն, հրկիզում կամ այլ հանրավտանգ արարք կատարելը կամ դրա իրական սպառնալիքը, կամ շինություն, կամ տրանսպորտային, հաղորդակցության կամ կապի միջոց, այլ հաղորդակցության ուղի զավթելը կամ պահելը՝ զուգորդված քաղաքացիական անձին կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձին կյանքից զրկելու, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու կամ այլ ծանր հետեւանք առաջացնելու վտանգով, որի նպատակն է բնակչությանը կամ դրա առանձին խմբին ահաբեկելը, հանրային իշխանության մարմինների գործունեությունը կազմալուծելը, հանրային իշխանության ներկայացուցչին, պետական կամ հանրային ծառայողին կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչին կամ այլ կազմակերպությունում ծառայող անձին որեւէ արարք կատարելուն կամ հանցավորի այլ պահանջը կատարելուն հարկադրելը, ինչպես նաեւ միջազգային պայմանագրերով ահաբեկչություն համարվող ցանկացած այլ արարք՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

Մարտի 6-ին ԱԱԾ շենքի վրա վառվող առարկաներ նետելու կասկածանքով ձերբակալվել էր մեկ անձ:

Armlur.am-ին հայտնի է դարձել, թե ձերբակալված անձը կոնկրետ ինչ է նետել ԱԱԾ շենքի վրա եւ ցանկացել հրկիզել ԱԱԾ շենքը:

Մասնավորապես, ձերբակալված անձը շենքի վրա նետել է Մոլոտովի կոկտեյլ՝ հայտնի նաեւ որպես բենզինով պայթուցիկ, շշառումբ, աղքատի նռնակ, կրակային պայթուցիկ կամ պարզապես Մոլոտով: Անվանումն օգտագործվում է մի շարք ինքնաշեն հրդեհ առաջացնող պայթուցիկ նյութերի համար: Վերջինս ձերբակալված է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

17 ՄԵՂԱԴՐՅԱԼ

ՀՀ քննչական կոմիտեից պաշտոնապես հայտնեցին, որ Աջափնյակում տեղի ունեցած սպանության, սպանության փորձի դեպքի մասնակիցներից 17 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում: 2 անձի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը, 8-ի նկատմամբ՝ տնային կալանքը, 7-ի նկատմամբ՝ բացակայելու արգելքը: Փաստացի 17 մեղադրյալ կա այս պահին, սակայն հիմնական դերակատարին՝ ինքնաձիգով կրակող անձին, դեպքից 21 օր անց դեռ չեն գտել:

Փետրվարի 18-ին Աջափնյակում հնչած աղմկահարույց կրակոցների գործով ուշագրավ իրավիճակ է: Armlur.am-ը հայտնել էր, որ մասնակիցներից մեկի ընկերուհու աղջկան են մոտեցել, ու նա զգուշացրել է իր ընկերուհու աղջկանից հեռու մնալ, չմոտենալ, սակայն զգուշացումները չեն ազդել, ու բանը հասել է զինված հանդիպմանը:

Ի դեպ, աղմկահարույց տեսանյութում նկատում ենք, որ ինքնաձիգը ձեռքին տղամարդը կրակում է մյուս խմբի տղաների վրա. դեպքից անցել է 21 օր, ինքնաձիգը ձեռքին տղամարդուն իրավապահները, սակայն, մինչ օրս չեն հայտնաբերել:

Հիշեցնենք, որ փետրվարի 18-ին՝ ժամը 15-ի սահմաններում, ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ էր ստացվել, որ Երեւանի Աջափնյակ վարչական շրջանի բակերից մեկում վիճաբանություն է, եւ որ կրակոցի ձայներ են լսվել: Դեպքի վայր մեկնած ՆԳՆ ոստիկանության եւ ՔԿ ծառայողները պարզել են, որ ԲԿ-ներ են տեղափոխվել դանակահարված եւ հրազենային վնասվածքներով անձինք: Նրանցից մեկը՝ 45-ամյա Արսեն Վարդանյանը, հիվանդանոցում մահացել էր:

Ք. Մ.

324 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ ԳՈՒՅՔ

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործով 323 միլիոն 800 հազար դրամ միջին շուկայական արժեքով գույքը Հայաստանի Հանրապետության սեփականությանը հանձնելու նպատակով կնքվել է հաշտության համաձայնություն, որը 2026 թվականի մարտի 5-ին հաստատվել է դատարանի վճռով:

Գլխավոր դատախազությունը 2023 թվականի օգոստոսի 29-ին ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի նախկին ղեկավար Կարապետ Գուլոյանի օգնական Մանուկ Հակոբյանի եւ նրա կնոջ: Հիշեցնենք, որ Աբովյան համայնքի նախկին ղեկավար Կարապետ Գուլոյանի վերաբերյալ Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթը՝ դատախազի կողմից հաստատված մեղադրական եզրակացությամբ, դատարան է հանձնվել 2025 նոյեմբերի 6-ին:

Դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել էր վարույթ:

Նշված գործի շրջանակներում 2026 թվականի փետրվարի 27-ին Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում պատասխանողներ Մանուկ Հակոբյանի եւ նրա կնոջ հետ կնքվել է հաշտության համաձայնություն, որով պատասխանող կողմը համաձայնել է հայցապահանջում ներառված՝ 323 միլիոն 800 հազար դրամ միջին շուկայական արժեքով Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի Քանաքեռավան գյուղի շուրջ 20.6 հա մակերեսով անշարժ գույքն հանձնել Հայաստանի Հանրապետության սեփականությանը:

Նույն օրը Հակակոռուպցիոն դատարան է ներկայացվել դիմում՝ կնքվող հաշտության համաձայնությունը հաստատելու մասին:

2026 թվականի մարտի 4-ին Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել գործից մաս առանձնացնելու եւ առանձին վարույթում քննելու մասին:

2026 թվականի մարտի 5-ին Հակակոռուպցիոն դատարանը կայացրել է վճիռ, որով հաստատվել է 2026 թվականի փետրվարի 27-ին կնքված հաշտության համաձայնությունը:

Հայցապահանջում ներառված մյուս գույքերի բռնագանձման պահանջի մասով քաղաքացիական գործի քննությունը շարունակվում է:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԳՈՂԹՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 26-ին ոստիկանություն ահազանգ է ստացվել այն մասին, որ երկու օր առաջ՝ ժամը 9:15-ից մինչեւ 9:35-ն ընկած ժամանակահատվածում, անհայտ անձինք մտել են Կոտայքի մարզի Գողթ գյուղում գտնվող Գեղարդավանք եւ գանձանակից հափշտակել մոտ մեկ միլիոն դրամ: Մեկնել են Համայնքային ոստիկանության Գառնու բաժնի ծառայողները: Պարզվել է, որ գողությունը կատարել են 56-ամյա եւ 55-ամյա տղամարդիկ, որոնք գանձանակի դուռը բացել են հարմարեցված բանալիով, պոկել կապարակնիքը, հանել գումարը, ապա, հետքերը թաքցնելու նպատակով, սոսնձել են կապարակնիքը՝ վերականգնելով գանձանակի տեսքը եւ դիմել են փախուստի: Համայնքային ոստիկանության Գառնիի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ փետրվարի 28-ին 56-ամյա տղամարդը ձերբակալվել եւ խոստովանել է կատարածը: Մյուս տղամարդը ձերբակալվել է մարտի 4-ին:

ԱՊՕՐԻՆԻ ՈՐՍ

Մարտի 4-ին ապօրինի պահվող հրազենով ապօրինի որս արած անձանց են հայտնաբերել Համայնքային ոստիկանության Թալինի բաժնի ծառայողները: Իրացնելով օպերատիվ տեղեկությունները՝ համայնքային ոստիկանները Ագարակավան բնակավայր տանող ճանապարհին հայտնաբերել, ապօրինի որսի կասկածանքով ձերբալալել եւ «ՎԱԶ-211540» մակնիշի մեքենայով հանդերձ՝ բաժին են տեղափոխել 42-ամյա վարորդին եւ 61-ամյա ուղեւորին: Թալինի բաժնի պահպանվող հատուկ տարածք տեղափոխված «ՎԱԶ-211540»-ի սրահի տեսանելի մասում հայտնաբերվել են ապօրինի պահվող երկփողանի որսորդական հրացան, 16 մմ տրամաչափի 6 փամփուշտ, որսորդական հրացանի կրակված փամփուշտներ եւ 31 տափաստանային արտույտ, իսկ 61-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ՝ կրակված 2 փամփուշտ: Պարզվել է, որ նրանք թռչունները որսացել են Ագարակավան տանող ճանապարհի հարակից դաշտից: Ապօրինի որս կատարած տղամարդիկ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել են նախաքննական մարմին:

ԹՄՐԱՆՅՈՒԹ

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի բաժնի ծառայողները ստացած հերթական օպերատիվ տվյալն իրացրին փետրվարի 22-ին: Ժամը 12:20-ին Շիրազի փողոցում ձերբակալվեցին եւ վարչություն տեղափոխվեցին մայրաքաղաքի Չեխովի փողոցի բնակիչ 33-ամյա տղամարդն ու նրա 23-ամյա կինը: Տղամարդու խուզարկությամբ հայտնաբերվեց կպչուն ժապավենով 7 փաթեթ՝ մարիխուանայի նմանվող զանգվածներով: Նույն պարունակությամբ 10 փաթեթ էլ հայտնաբերվեց կնոջ խուզարկությամբ: Հայտնաբերված զանգվածների ընդհանուր քաշը մոտ 40 գրամ էր: Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ տարբեր վայրերում հայտնաբերվեց արդեն տեղադրված եւս 5 փաթեթ: Ամուսինների նկատմամբ խափանման միջոց է կիրառվել տնային կալանքը:

● *Հանրապետությունում մարտի 6-ից 9-ը բացահայտվել է 268 հանցագործություն, որոնցից 8-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԲՈՒԺՔՈՒՅՐԸ՝ ԴԱՅԱԿ

Մասնագիտությամբ բուժքույր Ռիտա Ճաղարյանը 2025թ. Դիլիջան համայնքի Հովքի մանկապարտեզում դաստիարակ էր աշխատում: Դա այն դեպքում, որ Հովքում, Դիլիջան համայնքի այլ բնակավայրերում կան մանկավարժական կրթությամբ անձինք, ովքեր կարող էին որպես դաստիարակ աշխատել: Այդ մասին հրապարակումներիցս հետո նա ազատվել է աշխատանքից: Հովքից հայտնեցին, որ այժմ բուժքույրը նույն մանկապարտեզում նորից է աշխատանքի ընդունվել: Խնդրի նախապատմությունը հետեւյալն է: Բուժքույր Ռ. Ճաղարյանի՝ որպես մանկապարտեզի դաստիարակ աշխատելու վերաբերյալ Հովքից ստացված բողոքի հիմքով 2025թ. ամռանը տեղեկատվական հարցում եմ ուղարկել կրթական տեսչական մարմնի ղեկավար Վաղարշակ Մատակյանին՝ առաջարկելով միջոցներ ձեռնարկել: 2025թ. հուլիսի 14-ին ստացել եմ Մատակյանի պատասխանը, որ տեսչական մարմինն այդ առիթով վարույթ է հարուցել, հայտնաբերվել են կրթության օրենսդրության պահանջների խախտումներ: 2025թ. հոկտեմբերի 1-ին ստացել եմ Վ. Մատակյանի գրությունը, որ դաստիարակի պաշտոնը զբաղեցրած անձը ազատվել է աշխատանքից, սակայն դաստիարակի թափուր պաշտոնի համար դեռեւս մրցույթ չի հայտարարվել:

Հովքի մոբայլ մանկապարտեզը, ուր 16 երեխա է հաճախում, գործում է Հաղարծին գյուղի մանկապարտեզի ենթակայությամբ: Հաղարծնի մանկապարտեզի տնօրեն Անահիտ Թամրազյանն ասաց, որ Ռիտա Ճաղարյանը 2025թ. դաստիարակի փոխարինող էր, 2 ամիս է աշխատել: 2026թ. հունվարի 1-ից հաստիքների անվանափոխություն է եղել, Հովքի մանկապարտեզում այժմ կան դաստիարակի եւ դայակի հաստիքներ, ինքը Ռ. Ճաղարյանին մարտի 1-ից 3 ամիս ժամկետով աշխատանքի է ընդունել որպես դայակ. եթե աշխատանքում իրեն կարդարացնի, կշարունակի աշխատել: Հաղարծնի մանկապարտեզի տնօրենն ասաց, որ դա արվել է օրենքի շրջանակներում: Ա. Թամրազյանին հարցրի, թե ինչու Հովքի մանկապարտեզում թափուր տեղի համար մրցույթ չի հայտարարվել: Նա ասաց, որ 2025թ. օգոստոսին Դիլիջանի համայնքապետարանը պետք է նման հայտարարություն տված լիներ: Հովքի մանկապարտեզի դաստիարակը Հովքի վարչական ղեկավար Հովհաննես Նաղդալյանի կինն է: Հովքից հայտնեցին, որ Հ. Նաղդալյանը շահագրգիռ է, որ Ռ. Ճաղարյանը աշխատի մանկապարտեզում, քանի որ երբ վարչական ղեկավարի կինը բացակայում է, Ռիտան նրան փոխարինում է: Հ. Նաղդալյանը դա կտրուկ հերքեց, ասաց, որ իր կինը մի անգամ է աշխատանքից բացակայել, այն էլ անաշխատունակության թերթիկով, քանի որ Երեւան բուժման է մեկնել: Նա արդարացրեց դայակի պաշտոնում բուժքրոջ աշխատանքը. «Մեր գյուղի դիրքը գիտե՞ս, եթե մանկապարտեզի երեխաներից մեկին, Աստված ոչ պատահի, մի բան լինի, շտապօգնությունը մինչեւ հասնի, երեխային ո՞վ է օգնելու»:

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքի թափուր աշխատատեղեր զբաղեցնելու մրցույթների հայտարարությունների բաժինը դատարկ է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ 11-ՐԴ ՕՐԸ

ՆՈՐ ՀԱՐՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՃՈՂ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Իրանի նոր գերագույն առաջնորդ է նշանակվել Մոջթաբա Խամենեին, իսկ տարածաշրջանում ռազմական գործողությունները շարունակվում են: Միեւնույն ժամանակ համաշխարհային նավթի գները կտրուկ աճել են՝ գերազանցելով 100 դոլարը մեկ բարելի դիմաց:

Իրանն ունի նոր գերագույն առաջնորդ

Իրանի քաղաքական ներկայացուցիչները արագորեն աջակցություն են հայտնել Մոջթաբա Խամենեիին, որն ընտրվել է որպես երկրի նոր գերագույն առաջնորդ՝ իր սպանված հոր՝ Ալի Խամենեիի փոխարեն: Իրանի հիմնական ուժային կենտրոնները, այդ թվում՝ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (IRGC), հայտարարել են, որ պատրաստ են «ամբողջությամբ ենթարկվել եւ նույնիսկ զոհաբերել իրենց կյանքը» նրա համար: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը նշել է, որ Մոջթաբա Խամենեիի նշանակումը իր համար «անընդունելի» է: Վերլուծաբանների կարծիքով՝ նրա իշխանության գալը նշանակում է, որ Իրանը հավանաբար կշարունակի նույն կոշտ քաղաքականությունը, ինչ իր հայրը:

Նավթի գները կտրուկ աճել են

Պատերազմի հետեւանքով համաշխարհային նավթի շուկաներում գները կտրուկ բարձրացել են: ԱՄՆ նավթի ֆյուչերսները աճել են մոտ 18 տոկոսով՝ հասնելով մոտ 108 դոլարի մեկ բարելի դիմաց: Սա առաջին դեպքն է 2022 թվականից հետո, երբ նավթի գինը անցել է 100 դոլարի սահմանը: Թրամփը այդ աճը նվազագույն խնդիր է համարել՝ ասելով, որ դա «շատ փոքր գին է վճարելու համար»:

Հարձակումներ Պարսից ծոցի տարածաշրջանում

Ռազմական գործողությունները տարածվել են նաեւ Մերձավոր Արեւելքի այլ երկրներ:

• Իսրայելը հայտարարել է, որ հարվածներ է հասցրել Իրանի եւ Բեյրութի թիրախներին:

• Իրանը հայտարարել է նոր հրթիռային հարձակումների մասին:

• Բահրեյնում հայտնել են, որ իրանական անօդաչու թռչող սարքի հարձակման հետեւանքով բնակելի տարածքում վիրավորվել է առնվազն 32 մարդ:

Դպրոցի վրա հարվածի հետաքննություն

ԱՄՆ պաշտպանության նախարար Փիթ Հեգսեթը հայտարարել է, որ դեռ հետաքննվում է Իրանի տարրական դպրոցի վրա կատարված հարվածը, որի հետեւանքով, ըստ իրանական պետական լրատվամիջոցների, զոհվել է առնվազն 168 երեխա:

Նոր տեսանյութերը ցույց են տալիս, որ ԱՄՆ օդային հարվածը ուղղված է եղել դպրոցին հարակից ռազմածովային բազայի վրա, ինչը հակասում է Թրամփի այն հայտարարություններին, թե դեպքի համար պատասխանատու է Իրանը:

ԱՄՆ դիվանագետներին կոչ են արել հեռանալ

ԱՄՆ Պետդեպարտամենտը կարգադրել է ոչ հրատապ գործերով աշխատող դիվանագետներին հեռանալ Սաուդյան Արաբիայից:

Սա կապված է տարածաշրջանում անվտանգության աճող վտանգների հետ: Նախորդ շաբաթ այնտեղ հարձակման հետեւանքով զոհվել էր նաեւ մեկ ամերիկացի զինծառայող:

Իրանում եւ Լիբանանում իրավիճակը

Իրանի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը հայտարարել է, որ պատերազմը մտել է «նոր փուլ»: Նրա խոսքով՝ Իսրայելի հարվածները Իրանի նավթի եւ վառելիքի պահեստների վրա կարող են հանգեցնել տարածաշրջանի էներգետիկ ենթակառուցվածքների դեմ պատասխան հարձակումների:

Միեւնույն ժամանակ Իսրայելի բանակը հայտնել է, որ Բեյրութում իրականացված հարվածի հետեւանքով սպանվել են Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի «Քուդս» ուժերի մի քանի բարձրաստիճան հրամանատարներ: Լիբանանի իշխանությունների տվյալներով՝ հարձակումը տեղի է ունեցել հյուրանոցներից մեկում, եւ զոհվել է առնվազն չորս մարդ:

Թեհրանի բնակիչներից մեկը նշել է, որ շատ ընտանիքներ քննարկում են քաղաքը լքելու հնարավորությունը: Նրա խոսքով՝ շաբաթ երեկոյան վառելիքի պահեստների վրա հարվածները եղել են պատերազմի սկսվելուց ի վեր ամենաուժեղ ռմբակոծություններից:

ԱՄՆ-ի վերջին հայտարարությունները

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ պատերազմի ավարտի մասին որոշումը կընդունվի ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից: Նրա խոսքով՝ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն նույնպես կմասնակցի այդ որոշմանը, սակայն վերջնական խոսքը կլինի Վաշինգտոնինը: Պաշտպանության նախարար Փիթ Հեգսեթն էլ ասել է, որ ԱՄՆ-ը եւ նախագահ Թրամփը կսահմանեն Իրանի «կապիտուլյացիայի պայմանները», սակայն մանրամասներ չի ներկայացրել:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՓԵԶԵՇՔԻԱՆԸ ՀԵՐՔԵԼ Է

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանն Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հեռախոսազրույցում հայտարարել է, որ Թեհրանը որեւէ առնչություն չունի Նախիջեւանում անօդաչու թռչող սարքերի հետ կապված միջադեպի հետ: Այս մասին հաղորդել է Ադրբեջանի նախագահի մամուլի ծառայությունը:

Ալիեւը հայտարարել է Նախիջեւանում անօդաչու թռչող սարքերի հարձակումը հետաքննելու անհրաժեշտության մասին:

«Մարտի 8-ին իրանական կողմի նախաձեռնությամբ տեղի է ունեցել նախագահներ Մասուդ Փեզեշքիանի եւ Իլհամ Ալիեւի միջեւ հեռախոսազրույց: Ադրբեջանի ղեկավարն ընդգծել է Նախիջեւանում տեղի ունեցած միջադեպի հետաքննության կարեւորությունը», - ասվում է հաղորդագրության մեջ:

«Մասուդ Փեզեշքիանը հայտարարել է, որ Նախիջեւանում ավիահարվածը որեւէ առնչություն չունի Իրանի հետ, եւ ընդգծել է, որ միջադեպը կհետաքննվի», - հավելել է մամուլի ծառայությունը:

Մարտի 5-ին Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը եւ պաշտպանության նախարարությունը հայտնել են Իրանից արձակված անօդաչուների մասին: ԱԹՍ-ներից մեկն ընկել էր Նախիջեւանի օդանավակայանի տերմինալի շենքի վրա, եւս մեկը՝ Շեքերաբադ գյուղի դպրոցի մերձակայքում: Միջադեպի հետեւանքով վիրավորվել է 4 մարդ:

Ադրբեջանի իշխանությունները հայտարարել են, որ երկիրն իրավունք ունի հակահարված տալու: Իրանի գլխավոր շտաբը հերքել է անօդաչու թռչող սարքեր Ադրբեջանի օդային տարածք արձակելու մասին տեղեկությունը՝ միջադեպի համար մեղադրելով Իսրայելին:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԿՈՉԸ

Հնդկաստանի արտաքին գործերի նախարար Սուբրամանյամ Ջայշանկարը մարտի 9-ին խորհրդարանում ելույթում հաստատել է, որ Մերձավոր Արեւելքում հակամարտության ընթացքում զոհվել է 2 հնդիկ նավաստի, որոնք աշխատում էին հակամարտության գոտու մոտակայքում գործող առեւտրային նավերի վրա: Այս մասին հաղորդում է The Associated Press գործակալությունը:

Նախարարի խոսքով՝ մեկ նավաստի դեռեւս անհետ կորած է: Նա ներգրավված նավերի մասին լրացուցիչ մանրամասներ չի հայտնել:

«Այս շարունակվող հակամարտությունը հատկապես մտահոգիչ է Հնդկաստանի համար», - ասել է Ջայշանկարը՝ պարզաբանելով, որ գրեթե 10 միլիոն հնդիկ ապրում եւ աշխատում է Պարսից ծոցի երկրներում: Նա նաեւ նշել է, որ այս տարածաշրջանն առանցքային դեր ունի Հնդկաստանի էներգետիկ անվտանգության եւ առեւտրի գործում՝ տարեկան գրեթե 200 միլիարդ դոլար առեւտրի շրջանառությամբ:

Ջայշանկարը կրկին նշել է, որ Հնդկաստանը կողմ է տարածաշրջանում խաղաղությանը, եւ կոչ է արել վերադառնալ երկխոսությանը եւ դիվանագիտությանը: «Մենք կողմնակից ենք լարվածության թուլացմանը, զսպվածությանը եւ քաղաքացիական բնակչության անվտանգության ապահովմանը»,- ասել է նա:

● *Ըստ ՃՏՊ վիճակագրության՝ մարտի 6-ից 9-ը գրանցվել է 30 ավտովթար. 39 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՀԱՏՈՒԿ ՆՎԵՐ

Կանանց միջազգային տոնի առթիվ Հայէկոնոմբանկը հատուկ նվեր է պատրաստել կանանց համար: Մարտի 9-ից ապրիլի 7-ը, ձեռքբերելով Հայէկոնոմբանկի VISA Guru Travel կամ Mastercard World ճամփորդական քարտերը, կստանաք տարեկան սպասարկման վճարի՝

• 50% զեղչ՝ տվյալ քարտատեսակով վարկային գիծ ձեւակերպելու դեպքում,
• 30% զեղչ՝ տվյալ քարտատեսակով վարկային գիծ չձեւակերպելու դեպքում:

Հայէկոնոմբանկի ճամփորդական քարտերով հնարավոր է օգտվել օդանավակայանների բիզնես սրահների անվճար մուտքից, Fast Track ծառայությունից, Concierge 24/7 աջակցությունից եւ բազում այլ առավելություններից:

Ավելին, Հայէկոնոմբանկի ցանկացած այլ քարտով աշխատավարձ ստանալու դեպքում կստանաք լրացուցիչ 10% զեղչ:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: (Գ)

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Իրանի դեմ պատերազմը դադարեցնելու որոշումը կլինի «փոխադարձ» որոշում, որը կկայացվի Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուի հետ միասին: Այս մասին նա ասել է The Times of Israel-ի հետ հեռախոսային հարցազրույցում: Ըստ պարբերականի՝ Թրամփը նշել է, որ Նեթանյահուն հակամարտության ավարտի հարցում դերակատարում կունենա, սակայն վերջնական որոշումը կկայացնի ինքը: «Կարծում եմ՝ դա փոխադարձ է... որոշ առումով: Մենք խոսում ենք: Ես համապատասխան ժամանակ որոշում կկայացնեմ, բայց ամեն ինչ պետք է հաշվի առնվի», - ասել է ԱՄՆ նախագահը: Նա նաեւ ասել է, որ Իրանը կոչնչացներ Իսրայելին, եթե ինքը եւ Նեթանյահուն չլինեին: «Իրանը պատրաստվում էր ոչնչացնել Իսրայելը եւ դրա շուրջ գտնվող ամեն բան... Մենք աշխատել ենք միասին: Մենք ոչնչացրել ենք մի երկիր, որը ցանկանում էր ոչնչացնել Իսրայելը»,- ասել է Թրամփը: Հարցին՝ արդյոք Իսրայելը կարող է շարունակել պատերազմն Իրանի դեմ, նույնիսկ եթե ԱՄՆ-ն որոշի դադարեցնել իր հարձակումները, Թրամփը նշել է, որ դրա անհրաժեշտությունը չի լինի:

Մարտի 6-ին Սպիտակ տան մամուլի քարտուղար Քերոլայն Լեւիթը հայտարարել էր, որ Վաշինգտոնն ակնկալում է, որ Իրանի դեմ ռազմական գործողությունները կտեւեն 4-ից 6 շաբաթ:

Իրանում զոհերի թիվը գերազանցել է 1300-ը, Իսրայելը հայտնել է 10-ից ավելի զոհի մասին, ԱՄՆ-ն էլ նշել է ռազմական գործողության ընթացքում 7 զինծառայողի զոհվելու մասին: Շուրջ 2 տասնյակ զոհ կա Մերձավոր Արեւելքի տարբեր երկրներում: Լիբանանում, որտեղից «Հեզբոլլահ»-ը հարվածներ է հասցրել Իսրայելին, իսրայելական պատասխան հարվածներից զոհերի թիվը գերազանցել է 390-ը:

TEAM ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱԿՑԻԱ

Գ

ԳԱՐՆԱՆԸ ՆՎԻՐԻՐ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ

Team Telecom Armenia-ն, գարնանային տոներին ընդառաջ, հանդես է գալիս բացառիկ առաջարկով: Պաշտոնական գործընկերոջ՝ Honor-ի հետ տոնական ակցիայի շրջանակում գնելով սմարթֆոն՝ հաճախորդները կստանան նաեւ սմարթ ժամացույց:

Այսպիսով, մինչեւ 2026 թվականի ապրիլը 10-ը ներառյալ Honor X8d սմարթֆոն գնելու դեպքում հաճախորդները կստանան նաեւ Honor Choice Watch 2i սմարթ ժամացույց:

Տոնական ակցիայի շրջանակում հաճախորդներին Team-ի կողմից կտրամադրվի նաեւ TeamTok փաթեթ՝ 1 ամսով եւ 100 ԳԲ ինտերնետ՝ 6 ամսվա համար:

Honor X8d սմարթֆոնն ունի հզոր մարտկոց (7 000 մԱժ), վառ AMOLED էկրան, սմարթֆոնը համապատասխանում է ջրադիմացկունության եւ փոշու ներթափանցման IP65 միջազգային ստանդարտին, ինչպես նաեւ հագեցած է արհեստական բանականության ինտեգրացիաներով, որոնք բարելավում են լուսանկարների որակը եւ արդյունավետ դարձնում սմարթֆոնի աշխատանքը:

Հեռախոսը եւ՛ կանխիկ, եւ՛ ապառիկ հնարավոր է ձեռք բերել ինչպես Tea2-ի վաճառքի եւ սպասարկման կենտրոններից, այնպես էլ առցանց հարթակից՝ ամսական սկսած 1750 դրամից կամ վճարելով 104 900 դրամ:

Առաջարկը գործում է 01.03.26թ.-10.04.26թ. ներառյալ եւ հասանելի է միայն ֆիզիկական անձանց:

Team Telecom Armenia-ի մասին

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին: Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

Հասարակայնության հետ կապերի բաժին՝ pr@telecomarmenia.am

ԲԱԺՆԵՄԱՍ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

Գ

ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամը նշանակալից փոքրամասնային բաժնեմաս է ձեռք բերել «Բեկոն Հոլդինգ»-ում՝ աճի խթանման ու շուկայում դիրքի ամրապնդման նպատակով:

• Բաժնետիրական ներդրումը կբարելավի կորպորատիվ կառավարումը եւ կաջակցի արտահանմանն ու շուկայի մասնաբաժնի ընդլայնմանը,
• Շեշտադրում՝ հաշվեկշռի օպտիմալացմանը, գործընթացների ավտոմատացմանն ու լոգիստիկ ենթակառուցվածքներում ներդրումներին,
• Գործառնական արդիականացում եւ արտադրանքի պորտֆելի վերանայում՝ արդյունավետության եւ մասշտաբելիության բարձրացման նպատակով:

ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամը, որն «Ամբեր Կապիտալ Արմենիայի» կողմից կառավարվող մասնավոր բաժնեմասնակցային հիմնադրամ է, ձեռք է բերել նշանակալից փոքրամասնային բաժնեմաս «Բեկոն Հոլդինգ» ՓԲԸ-ում՝ «Բեկոն Պրոդուկտ» ՍՊԸ-ի հոլդինգային ընկերությունում, որը հանդիսանում է մսամթերքի եւ կիսաֆաբրիկատների առաջատար արտադրող Հայաստանում: Հիմնադրամի ընդհանուր ներդրումը կազմում է 6.0 միլիոն ԱՄՆ դոլար:

1995 թվականին հիմնադրված ընկերությունը դարձել է ոլորտի առաջատարներից մեկը՝ շնորհիվ ամուր ապրանքանիշի դիրքավորման եւ կայուն բարձր որակի պահպանման: Այսօր այն ունի նշանակալի ներկայություն ներքին շուկայում եւ առաջարկում է լայն արտադրական տեսականի, որը համահունչ է սպառողների փոփոխվող նախընտրություններին:

Ներդրումը կաջակցի համապարփակ զարգացման ռազմավարությանը, որը կենտրոնացած է գործառնական արդիականացման ու ենթակառուցվածքների կատարելագործման վրա:

Առաջնահերթ ուղղություններից են արտադրական գործընթացների ավտոմատացումը եւ լոգիստիկ հնարավորությունների բարելավումը՝ ուղղված արդյունավետության, մասշտաբելիության եւ գործառնական կառավարման որակի բարձրացմանը:

Միաժամանակ ընկերությունը կզարգացնի արտադրանքի պորտֆելը եւ կամրապնդի իր առեւտրային հարթակը՝ ապահովելու շուկայի հետագա ընդլայնում, արտահանում, եւ երկարաժամկետ արժեքի ստեղծում:

«Ամբեր Կապիտալ Արմենիա»-ի գործադիր տնօրեն Անուշավան Սիմոնյանն ընդգծել է. «Մենք ուրախ ենք հայտարարել, որ ամիսներ տեւած բանակցությունների արդյունքում ներդրումը իրականացվեց: Մեր գործընկերությունը միտված է ընկերության ամբողջ առեւտրային ներուժի բացահայտմանը՝ կապիտալի խելամիտ օգտագործման, ամուր կորպորատիվ կառավարման եւ կարգապահ ու թափանցիկ ֆինանսական կառավարման միջոցով: Մենք տեսնում ենք մեծ հնարավորություններ շուկայի մասնաբաժնի ընդլայնման, եւ կայուն, երկարաժամկետ աճի համար»:

«Այս գործընկերությունը «Բեկոն Պրոդուկտ»-ին տրամադրում է թե՛ կապիտալ, թե՛ ռազմավարական փորձագիտություն՝ զարգացման հաջորդ փուլ անցնելու համար: «Ամբեր Կապիտալի» հետ մենք նպատակ ունենք խթանել աճը, ներկայացնել նոր արտադրատեսակներ եւ առավել ամրապնդել մեր դիրքերը հայկական շուկայում եւ արտերկրում»,- ասել է «Բեկոն Պրոդուկտ» ՍՊԸ-ի բաժնետեր Պավլիկ Մարգարյանը:

«Ամբեր ԿապիտալԱրմենիայի» կողմից կառավարվող ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամը մասնավոր բաժնեմասնակցային հիմնադրամ է, որը գործարկվել է Հայաստանում 2020թ. հունվարին՝ Եվրոպական միության (ԵՄ), Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ), Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթի, Հրայր եւ Աննա Հովնանյան հիմնադրամի եւ Ամբեր Կապիտալի ներդրումային թիմի ներդրումների միջոցով: Հիմնադրամը հետագայում լրացուցիչ կապիտալ է ներգրավել Ֆ-կվադրատ Ամպեգա Ասսեթ Մենեջմենթից, Նիդեռլանդների Զեռնարկատիրական զարգացման բանկից (FMO) եւ Հայաստանի կառավարությունից, ինչպես նաեւ մի շարք սփյուռքահայ ներդրողներից՝ ընդհանուր պարտավորված կապիտալը հասցնելով 60 մլն ԱՄՆ դոլարի: Հիմնադրամը հանձնառու է ֆինանսավորել Հայաստանի ՓՄՁ-ների կայուն աճը՝ կապիտալ ներդրումների եւ բնապահպանական, սոցիալական ու կորպորատիվ կառավարման բարձր չափանիշների կիրառման միջոցով:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՂՁԱՎԱՆՁԸ

«ԹԻԼԻՎԵՐՍ». ՊԵ՞ՏՔ Է ՎԱԽԵՆԱԼ ԴՐԱՆՑԻՑ

Քարի գալուս «Թիլիվերս»՝ վիճահարույց արհեստական ինտելեկտի «դերասանուհի» Թիլի Նորվուդի թվային աբխարհը: Դրա ստեղծողը մեզ վստահեցնում է, որ արհեստական ինտելեկտի կերպարները կհամագործակցեն եւ կկառուցեն կարիերա այնտեղ: Պե՞տք է անհանգստանանք:

Առաջին արհեստական ինտելեկտի «դերասանուհու» թվային աշխարհը շուտով ավելի մեծ կդառնա..

Լոնդոնում գործող Xicoia թվային տաղանդների ստուդիայի վիճահարույց ստեղծագործությունը՝ Թիլի Նորվուդը շուտով կդառնա «Tillyverse» անվամբ թվային տիեզերքի մի մասը:

Ինչպես տեղեկանում ենք ewronews-ից, նա նման է Անա դե Արմասի եւ Լիլի Քոլինզի սրբապիղծ խաչասերման. նրան կյանքի է կոչել հոլանդացի դերասանուհի եւ տեխնոլոգիական ստեղծող Էլին վան դեր Վելդենը: Նրա արհեստական բանականության ստուդիան՝ Xicoia-ն, որը վան դեր Վելդենի Particle6 պրոդյուսերական ընկերության ճյուղն է, նպատակ ունի թվային «տաղանդներ» բերել կինո եւ հեռուստատեսություն:

«Մենք ուզում ենք, որ Թիլլին լինի հաջորդ Սքարլեթ Յոհանսոնը կամ Նատալի Փորթմանը, սա է մեր գործունեության էությունը»,-անցյալ տարվա հուլիսին Broadcast International-ին ասել էր վան դեր Վելդենը, երբ տարբեր սոցիալական ցանցերում աննկատելիորեն գովազդել էր իր սարսափելի զարգացումը:

Միությունը հավելեց. «Պարզ ասած՝ Թիլի Նորվուդը դերասանուհի չէ, այլ անթիվ պրոֆեսիոնալ կատարողների աշխատանքի վրա մարզված համակարգչային ծրագրի կողմից ստեղծված կերպար՝ առանց նրանց թույլտվության կամ փոխհատուցման»:

Վերջերս հայտարարված «Թիլիվերս»-ում կներկայացվեն Թիլիին եւ արհեստական բանականությամբ հզորացող կերպարների նոր սերունդ, որոնք կհամագործակցեն եւ կկառուցեն կարիերաներ:

Այս «արագ ընդլայնումը» մտավոր սեփականություն ստեղծելու եւ «ինչպես է տաղանդը ստեղծվում, զարգանում եւ ընկալվում արհեստական բանականության դարաշրջանում» փոխելու ծրագրի մի մասն է:

«Թիլի Նորվուդը ավելին է, քան պարզապես արհեստական բանականության կերպար. նա մարդ է, ապրանքանիշ եւ ապագա համաշխարհային սուպերաստղ՝ գրավիչ սյուժեով», - ասել է վան դեր Վելդենը նոր մամուլի հաղորդագրության մեջ:

Ընկերությունը հույս ունի այս տարվա վերջում գործարկել «Tillyverse»-ը՝ մի նախաձեռնություն, որը միայն սրում է մտավախությունները արվեստում արհեստական բանականության ընդլայնման վերաբերյալ, քանի որ շատերը վախենում են, որ տեխնոլոգիան կօգտագործվի (կամ արդեն օգտագործվել է) աշխատատեղերը փոխարինելու համար:

Այնուամենայնիվ, Նորվուդը եւ նրա «Թիլիվերսը» շարունակում են մնալ սպառնալիք, որը պետք է լուրջ ընդունել, հատկապես թվային աշխարհում, որը լի է դիփֆեյքերով եւ ագրեսիվորեն անիմաստ արհեստական բանականության աղբով, եւ իրական աշխարհում, որտեղ Հոլիվուդյան արդյունաբերությունը գրեթե ամեն ինչ կանի՝ ծախսերը կրճատելու եւ շահույթի նպատակով լսարանի աչքին շուկայական համարվող ցանկացած ապրանք ներկայացնելու համար:

Պարզապես պատկերացրեք. հավերժ երիտասարդ եւ հնազանդ «դերասանուհի», որը հիմնված է երիտասարդ կանանց գողացված տեսքերի եւ դերասանական խաղի վրա, որոնք փորձում են կարիերա կառուցել իրենց իրական տաղանդի հիման վրա, պատրաստ են կատարել ցանկացած պրոդյուսերի ցանկություն եւ չեն պահանջում որեւէ փոխհատուցում: Անկասկած, կլինեն պրոդյուսերներ, որոնք լրջորեն կհետաքրքրվեն ինչպես առեւտրային ներուժով, այնպես էլ ուրիշի ինքնությունը գողացող նման թվային խաբեբայի հնազանդությամբ:

Բարեբախտաբար, դիմադրությունը շարունակվում է, եւ առայժմ, գոնե պաշտոնապես, որոշակի երաշխիքներ գոյություն ունեն: Այս տարվա սկզբին SAG-AFTRA-ն վերսկսեց պայմանագրային բանակցությունները խոշոր ստուդիաների հետ՝ քննարկելով, ի թիվս այլ բաների, «Tilly հարկի» հնարավոր ներդրումը՝ վճար, որը ստուդիաները պետք է վճարեն արհմիությանը արհեստական ինտելեկտի «դերասաններ» օգտագործելու դիմաց: Եւ եկեք հուսանք, որ հանդիսատեսը կշարունակի գնահատել մարդկային տաղանդը եւ զարկերակը:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՑՈՒՅԱԿՈՒՄ ՉԷ

Մադրիդի «Ռեալի» ամառային տրանսֆերային պատուհանի գլխավոր նպատակներից մեկը դաշտի միջին օղակի ուժեղացումն է: Ինչպես տեղեկացնում է AS պարբերականը, մադրիդյան ակումբը կազմել է երեք կենտրոնական կիսապաշտպաններից բաղկացած կարճ ցուցակ, որում, սակայն, Ռոդրիի անունը բացակայում է: Այդ ցուցակն ունի հետեւյալ տեսքը. Ադամ Ուորթոն («Քրիսթալ Փելաս»), Կես Սմիթ («ԱԶ Ալկմար») եւ Վիտինյա (ՊՍԺ):

Ավելի վաղ մամուլում արդեն շրջանառվում էին այս ֆուտբոլիստների անունները՝ կապված «արքայական» ակումբի հետ: Միեւնույն ժամանակ նշվում է, որ մադրիդցիների համար խիստ բարդ կլինի իրագործել Վիտինյայի տրանսֆերը՝ ՊՍԺ-ի հետ ունեցած լարված հարաբերությունների պատճառով:

Հավելենք, որ 26-ամյա Վիտինյայի տրանսֆերային արժեքը գնահատվում է 110 մլն եվրո, 22-ամյա Ուորթոնինը՝ 60 մլն, իսկ 20-ամյա Սմիթինը՝ 20 մլն եվրո:

Ո՞Վ Է ՄՐՑԱԿԻՑԸ

Ավելի վաղ հաղորդվում էր, որ Ծառուկյանը ռեւանշ է անցկացնելու ամերիկացի ըմբիշ Ջորջիո Պուլասի հետ, որի դեմ մենամարտը «RAF» լիգայի մրցաշարում ավարտվել էր զանգվածային ծեծկռտուքով: Հետագայում պարզ դարձավ, որ Պուլասը հրաժարվել է գրեփլինգի կանոններով մրցելույթից եւ պահանջել է երկրորդ գոտեմարտն անցկացնել ազատ ոճի ըմբշամարտի կանոններով: Արդյունքում՝ կարճ ծանուցմամբ Ծառուկյանի դեմ մրցագորգ դուրս գալուն համաձայնել է UFC-ի նախկին մարտիկ Մուհամադ Մոկաեւը:

Ծառուկյան - Մոկաեւ գոտեմարտը կկայանա մարտի 11-ին Ռիո դե Ժանեյրոյում՝ «Hype Brazil» մրցաշարի շրջանակում: Մարտիկները կմրցեն 10 րոպե տեւողությամբ գոտեմարտում՝ «submission only» գրեփլինգի կանոններով (հաղթանակը հնարավոր է գրանցել միայն ցավեցնող կամ խեղդող հնարքով, հակառակ դեպքում կարձանագրվի ոչ-ոքի):

Ո՞Վ ԿԳԼԽԱՎՈՐԻ

Իտալական հեղինակավոր Corriere dello Sport պարբերականի տեղեկություններով՝ Թուրինի «Յուվենտուսի» նախկին գլխավոր մարզիչ Տիագո Մոտտան հնարավոր է գլխավորի լոնդոնի «Տոտենհեմը»: Թեեւ ներկայումս թիմի ղեկը հանձնված է Իգոր Տուդորին, Անգլիայի Պրեմիեր լիգայում (ԱՊԼ) ցուցադրած անբավարար արդյունքները կարող են ստիպել ակումբի ղեկավարությանը փոխարինող գտնել նրան: Նշենք, որ Մոտտան գործազուրկ է 2025 թվականի մարտին «Յուվենտուսից» հեռանալուց հետո: Ավելի վաղ նրա անունը շրջանառվում էր նաեւ «Միլանի» եւ «Ռեալ Սոսիեդադի» գլխավոր մարզչի թափուր պաշտոնների համատեքստում:

Հավելենք, որ այս պահի դրությամբ «Տոտենհեմը» 29 միավորով ԱՊԼ-ի մրցաշարային աղյուսակի 16-րդ հորիզոնականում է եւ ընդամենը 1 միավորով է անջրպետված վտանգավոր գոտուց՝ 18-րդ տեղում գտնվող «Վեսթ Հեմից» (28 միավոր):

ԼՈՒՐԵՐ

«ԵՐԵՎԱՆԻ ԿԱՆԱՅՔ»՝ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

«Երեւանի կանայք. ժամանակի դիմագծեր» խորագրով լուսանկարների ցուցահանդեսը Երեւանի պատմության թանգարանի նախաձեռնությունն է՝ նվիրված կանանց մեկամսյակին:

Երեւանի քաղաքապետարանից հայտնում են, որ այն նպատակ ունի արժեւորելու երեւանցի կնոջ դերը քաղաքի պատմության, մշակույթի, կրթական ու հասարակական կյանքի ձեւավորման եւ զարգացման գործընթացում՝ ներկայացնելով նրա կերպարը ժամանակի մեջ:

Ցուցադրության հիմքում Երեւանի պատմության թանգարանի հարուստ հավաքածուից ընտրված լուսանկարներն են, որոնք ընդգրկում են 19-րդ դարից մինչեւ մեր օրերը: Այս վավերագրական պատկերները ներկայացնում են տարբեր սոցիալական շերտերի կանանց՝ մտավորականների, արվեստագետների, արտադրությունում աշխատողների:

Լուսանկարներում ավանդական տարազով հայ կանայք են՝ ազգային ինքնության կրողները, ինչպես նաեւ ընդգծված է հայ մոր կերպարը՝ որպես օջախի պահապան:

Խորհրդային շրջանի լուսանկարները ներկայացնում են կրթված, մասնագիտացված կնոջ կերպարը, որը լիարժեք մասնակցում է քաղաքի տնտեսական ու մշակութային զարգացմանը:

Ցուցահանդեսում ներկայացված են նաեւ Գրականության եւ արվեստի թանգարանի հավաքածուից բացառիկ լուսանկարներ, որոնց հեղինակներն են ժամանակակից լուսանկարիչներ Էմմա Մարաշլյանը, Սերժ Դավիդովը (Երեւան-Երեւանցիներ հարթակ) եւ կոլեկցիոներ Ռոբերտ Հակոբյանը:

Ցուցահանդեսում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում նաեւ «Հայ լուսանկարիչներ» ազգային ասոցիացիայի անդամների ժամանակակից աշխատանքները: Նրանց ստեղծագործություններում երիտասարդ կանանց կերպարները ներկայացված են Երեւանի քաղաքային միջավայրի համատեքստում՝ պատմական շենքերի ֆոնին, բակերում, փողոցներում, մշակութային օջախներում եւ այլ հանրային տարածքներում: Քաղաքն այստեղ դառնում է ոչ միայն միջավայր, այլեւ ակտիվ դերակատար՝ ձեւավորելով կերպարի տրամադրությունը, հոգեբանական խորությունը եւ պատմողականությունը: Լուսանկարիչների տեսախցիկներից երեւանցի կինը ներկայանում է որպես ժամանակակից, ինքնավստահ եւ ստեղծարար անհատ:

«Երեւանի կանայք. ժամանակի դիմագծեր» ցուցահանդեսը հիշողության վերարժեւորում է եւ ներկայի վերաիմաստավորում: Այս ցուցահանդեսը հարգանքի տուրք է երեւանցի կնոջ ուժին, նրբությանը, ստեղծարար մտքին եւ պատասխանատվությանը: Այն մի հարթակ է, որտեղ անցյալն ու ներկան հանդիպում են՝ ներկայացնելով կնոջ կերպարը որպես ժամանակի հայելի եւ քաղաքի կենդանի հիշողություն:

Ցուցահանդեսը կգործի մինչեւ ապրիլի 7-ը:

ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՖԻԼՄԸ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏԱՄՆՅԱԿՈՒՄ

Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմը հիսունվեց տարի անց ցուցադրվել է Հարավային Կորեայում եւ ցուցադրման առաջին շաբաթվա ընթացքում հայտնվել է կորեական կինովարձույթի լավագույն տասնյակում:

«Կորեայում ֆիլմի ընդհանուր հավաքը կազմել է շուրջ 160 հազար ԱՄՆ դոլար: Հայկական կինոյի այս բացառիկ ստեղծագործությունը շարունակում է նորովի բացահայտվել միջազգային մշակութային միջավայրում՝ ներգրավելով նոր լսարաններ եւ հաստատելով իր կայուն ներկայությունը համաշխարհային կինոարվեստում: Բեռլինի կինոփառատոնում MK2 -ի մեր գործընկերները Հայաստանի կինոյի հիմնադրամին են նվիրել «Նռան գույնը» ֆիլմի կորեական կինովարձույթի համար պատրաստված պաստառը»,-ասվում է հաղորդագրության մեջ:

Ֆիլմը վերականգնվել է Հայաստանի կինոյի հիմնադրամի, The Film Foundation World Cinema Project-ի եւ Fondazione Cineteca di Bologna-ի համագործակցությամբ:

● *Այսօր՝ ժամը 20:00-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում տեղի կունենա «Մահապատժի քրոնիկներ» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ են անհրաժեշտ պատվաստումները:
Տիգրան Ղազարյան (25 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Պատվաստումները լավագույն միջոցն են պաշտպանվելու այնպիսի վարակներից, ինչպիսիք են դիֆթերիան, փայտացումը, պոլիոմիելիտը, կապույտ հազը, կարմրուկը, կարմրախտը, խոզուկը, վիրուսային հեպատիտ Բ-ն, մենինգիտները եւ թոքաբորբերը՝ պայմանավորված պնեւմակոկային եւ հեմոֆիլուսային Բ տիպի վարակներով, ռոտավիրուսային վարակները: Պատվաստումներն անհրաժեշտ են, որպեսզի կանխարգելվի հիվանդացման դեպքը, կանխարգելվի մահը կամ հաշմանդամությունը, վարակներից պաշտպանվեն բնակչության ստվար զանգվածները: Պատվաստանյութերը պատրաստված են հիվանդություն առաջացնող մանրէներից, որոնք փոփոխված են այնպես, որ մարդկանց չվնասելով՝ միաժամանակ ապահովեն վստահելի պաշտպանություն:
ՀՀ ԱՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պատվաստանյութն օրգանիզմում առաջացնում է համապատասխան հակամարմիններ, որոնք բնական վարակի հետ հանդիպելու դեպքում պաշտպանում են հիվանդանալուց: Իսկ եթե նույնիսկ պատվաստված երեխան հիվանդանում է, ապա հիվանդությունն ընթանում է անհամեմատ թե- թեւ: Վարակիչ հիվանդությունները շատ արագ են տարածվում, սակայն այդ տարածումը կարելի է կանգնեցնել միայն այն պարագայում, երբ տվյալ բնակավայրում պատվաստված մարդկանց թիվը բավարար մակարդակի է (95%-ից ոչ պակաս): Համայնքում որքան շատ են պատվաստված երեխաները (նաեւ մեծահասակները), այնքան պաշտպանված է համայնքի յուրաքանչյուր անդամը:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինձ նշանակել են գլյուկոզայի տոլերանտության հետազոտություն: Ի՞նչ է դա նշանակում:
Լիլիթ Համբարձումյան (54 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գլյուկոզայի տոլերանտության հետազոտությունն իրականացվում է, երբ հիվանդը գանգատներ չունի, սակայն արյան քննությամբ գլյուկոզայի մակարդակը 6,9 մմոլ/լից բարձր է, կամ երբ հիվանդը գեր է, ճարպակալած, գանգատ չունի, մեզի մեջ գլյուկոզա չկա, բայց ինչ-որ բան կասկածվում է: Հիվանդին տրվում է գլյուկոզայով ծանրաբեռնում. առաջարկում են 75 գրամ գլյուկոզա խմելու ձեւով, եւ 2 ժամ հետո կատարվում է արյան մեջ գլյուկոզայի քանակի որոշում: Եթե այդ ժամանակ գլյուկոզայի քանակը չի գերազանցում 7,8 մմոլ/լ-ը, համարվում է, որ պացիենտն առողջ է: Եթե այն 7,8 -11մմոլ/լ է, համարվում է, որ կա գլյուկոզայի տոլերանտության խանգարում, այսինքն՝նախադիաբետիկ փուլն է: Իսկ եթե 11 մմոլ/լ-ից ավելի է, արդեն ախտորոշվում է շաքարային դիաբետ:
Իզմիրլյան բժշկական կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հղիների մոտ մոտեցումն այլ է. քաղցած վիճակում գլյուկոզան արյան մեջ չպետք է գերազանցի 5,1 մմոլ/լ-ը, եւ նրանց մոտ ծանրաբեռնվածության փորձի ժամանակ պետք չէ ռիսկի դիմել. հղիներին խմեցնում են 50 գրամ գլյուկոզա եւ ստուգում են արյունը 1 ժամ հետո: Նորմայում գլյուկոզան չպետք է գերազանցի 10 մմոլ/լ-ը, եթե դրանից ավելի է, եւ եթե 2 ժամից հետո էլ 8,5 մմոլ/լ է կամ ավելի, արդեն շաքարային դիաբետ է ախտորոշվում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանի կենտրոնում

Երեւանի շենքերը ծաղիկներով են զարդարվում եւ գարուն ավետում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 13 - 17 0 - 4
	Կոտայքի լեռներ	- 10 - 14 0 - 3
	Կոտայքի նախալեռներ	- 3 - 6 + 2 + 5
	Գեղարքունիք	- 14 - 17 0 - 4
	Լոռի	- 6 - 10 + 3 + 6
	Տավուշ	- 5 - 8 + 3 + 6
	Արագածոտնի լեռներ	- 14 - 17 0 - 4
	Արագածոտնի նախալեռներ	- 2 - 7 + 1 + 6

	Արարատ	- 1 - 4 + 3 + 6
	Արմավիր	- 2 - 5 + 5 + 8
	Վայոց ձորի լեռներ	- 9 - 13 0 - 3
	Վայոց ձորի նախալեռներ	0 - 4 + 6 + 9
	Սյունիքի լեռներ	- 11 - 15 - 1 - 4
	Սյունիքի նախալեռներ	- 8 - 11 - 1 + 3
	Սյունիքի հովիտներ	- 3 + 2 + 6 + 9
	Երեւան	- 2 - 4 + 5 + 7

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **09.03.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*